ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«03» դեկտեմբերի 2019 թվականի N:322 ք.Գյումրի

ՄՈՒՇԵՂ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ, ԱՐՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի 2019 թվականի դեկտեմբերի 2-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մուշեղ Մուրադյանին, գլխավոր մասնագետներ Արտակ Հայրապետյանին և Սամվել Հարությունյանին 2019 թվականի դեկտեմբերի 4-ին, 5-ին և 6-ին գործուղել քաղաք Մարալիկ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մարալիկի N 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ֆինանսական աուդիտ իրականացնելու նպատակով:
2. Մուշեղ Մուրադյանին, Արտակ Հայրապետյանին և Սամվել Հարությունյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է